ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

28 փետրվարի չորեքշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

26
(2876)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԵՐԵՄՅԱՆՆԵՐԸ «ՎՆԱՍՈՎ ԵՆ ԱՇԽԱՏՈՒՄ», ՓԱՍՏԱԹՈՒՂԹ



Հարկային վնասը Երեմյանների բիզնեսներում կրում է խրոնիկ բնույթ: ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի որոշմամբ հարկերից ազատված եւ արտոնյալ հարկային պայմաններով գործունեություն ծավալող «Հայր եւ որդի Երեմյաններ» ՍՊԸ-ն չի կատարում նաեւ հարկային մնացած պարտավորությունները:

Բանն այն է, որ «Հայր եւ որդի Երեմյաններ» ՍՊԸ-ն, 1000 խոշոր հարկատուների շարքում լինելով 141-րդը, տարեկան հարկային մուտքերը կազմել է 2 մլրդ 341 մլն դրամ, սակայն պետությանը վճարում է 970 մլն դրամ եկամտահարկ:

Հետաքրքիրն այն է, որ, ըստ ՀՀ հարկ վճարողների մասին օրենքի, շահութահարկ վճարողներ են համարվում (հոդված 103) ռեզիդենտ կազմակերպությունները, Հայաստանի Հանրապետությունում հաշվառված անհատ ձեռնարկատերերը, նոտարները, Հայաստանի Հանրապետությունում հաշվառված, կանոնները գրանցած պայմանագրային ներդրումային ֆոնդերը (բացառությամբ կենսաթոշակային ֆոնդերի եւ երաշխիքային ֆոնդերի), ոչ ռեզիդենտ կազմակերպությունները, ինչպես նաեւ մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող եւ մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետության աղբյուրներից եկամուտ ստացող ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք:

Ինչպես կարող ենք եզրակացնել, «Հայր եւ որդի Երեմյաններ» ՍՊԸ-ն դասվում է այս շարքին, սակայն չի վճարում պետության հասանելիք շահութահարկը:

Ըստ օրենքի՝ շահութահարկ վճարողներ չեն համարվում Հայաստանի Հանրապետությունը՝ ի դեմս պետական մարմինների, Հայաստանի Հանրապետության համայնքները՝ ի դեմս համայնքային կառավարչական հիմնարկների, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը, Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչությունները եւ հյուպատոսական հիմնարկները, դրանց հավասարեցված միջազգային կազմակերպությունները, «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հիման վրա ստեղծված հատուցման հիմնադրամը:

Այսպիսով, ստացվում է, որ իշխանությունը սեփական երաշխավորության տակ գտնվող անձանց կամ նրանց հետ կապ ունեցող կազմակերպությունները հոգատարությամբ պահում է բամբակների մեջ, իսկ, օրինակ, արտագնա աշխատանքի մեկնողներին անխնա հարկում է:



«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ղեկավար Նիկոլ Փաշինյանն առաջիկայում կրկին խորհրդարան կգնա: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ Փաշինյանը հերթական անգամ փակ հանդիպում կունենա ՔՊ-ական պատգամավորների հետ: Մեր տեղեկություններով՝նախնական փակ հանդիպումը նշանակված է առաջիկայում, սակայն Փաշինյանի գրաֆիկից կախված՝հնարավոր է՝ինչ-որ փոփոխություններ լինեն: Մեզ ասացին, որ փետրվարի 26-ին կայացած հանդիպումից հետո դեռ մնացել են կիսատ հարցեր ու թեմաներ, որոնք չեն հասցրել քննարկել, ուստի նախատեսում են եւս մեկ հանդիպում անցկացնել վարչապետի հետ:

ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Կարեն Բրուտյանը պաշտոնում նշանակվել է 2021թ. օգոստոսի 13-ին: Մինչ Պաշտպանության նախարարությունում աշխատելը Բրուտյանը պաշտոններ է ունեցել ֆինանսական ոլորտում, օրինակ՝ ՀՀ ֆինանսների նախարարությունում՝ որպես գլխավոր մասնագետ, ապա ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարությունում՝ որպես վարչության պետ, ՀՀ ՊԵԿ նախագահի խորհրդական եւ այսպես շարունակ: Բրուտյանը, ըստ 2022 թվականի հայտարարագրի, ունի 3 անշարժ գույք, որից մեկը բնակարան է բազմաբնակարան շենքում Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում. այն 2017 թվականին ժառանգություն է ստացել փոխնախարարը: Երկրորդ անշարժ գույքը Կոտայքի մարզի Փյունիկ համայնքում գտնվող անհատական բնակելի տունն է, որը 2012 թվականին է նվիրատվություն ստացել Բրուտյանը: Երրորդ անշարժ գույքը Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն նոր կառուցված, ձեռք բերված եւ անշարժ գույքի կադաստր վարող լիազոր մարմնի կողմից հաշվառված ու գնահատված շինություն է, որը ձեռք է բերվել 2019 թվականին, երբ Բրուտյանը ՀՀ ֆինանսների նախարարի առաջին տեղակալն էր: Այն գտնվում է Ջրվեժ համայնքում: Փոխնախարար Բրուտյանի կանխիկ դրամական միջոցները կազմել են 50 հազար եվրո, 40 հազար ԱՄՆ դոլար եւ 55 մլն դրամ: Բրուտյանի տարեկան եկամուտները կազմել են 19 մլն դրամ, որից 15 մլն 563 հազար դրամը աշխատանքի վարձատրություն է ՀՀ պաշտպանության նախարարությունից, իսկ 3 մլն 719 հազար դրամը՝ՀՀ ԿԱ ՊԵԿ-ից: Թե ինչպես է մշտապես միայն պետական պաշտոնյա աշխատած Բրուտյանը կուտակել այդքան կանխիկ գումար, թերեւս կպարզի Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը: Տեղեկացնենք, որ ստացված վարկերի եւ փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 48 մլն դրամ, որը ներառում է նաեւ 2 բնակելի տների հիփոթեքի մայր գումարի մնացորդը: Բրուտյանը եւս այն պաշտոնյաներից է, ով պաշտոնին զուգահեռ անշարժ գույքեր է ձեռք բերում եւ գումարներ դիզում:

ՔՊ-ական պատգամավոր Գագիկ Մելքոնյանի թոռան մասնակցությամբ գրանցված միջադեպի առիթով հարուցված քրեական վարույթը կարճվել է: Այս մասին, «Ժողովուրդ» օրաթերթի հարցմանն ի պատասխան, հայտնել են ՀՀ քննչական կոմիտեից: Նախ հիշեցնենք, թե ինչի մասին է խոսքը. 2023 թվականի նոյեմբերի 27-ին Երեւանի իրավատնտեսագիտության եւ կառավարման քոլեջում իշխանական պատգամավորի թոռը՝ Գագիկ Մելքոնյանը, դանակահարել էր նույն համալսարանի մեկ այլ սանի, սակայն տուժողը ոստիկաններին չէր հայտնել այդ մասին՝ասելով, թե վնասվածքը ստացել է վայր ընկնելու հետեւանքով: Ավելի ուշ ոստիկանությունը պարզել էր, որ Գագիկ Կարենի Մելքոնյանն է վնասվածքը հասցրել ուսանողին: Այդ առիթով հարուցվել էր քրեական վարույթ, սակայն, ինչպես կանխատեսվում էր Նիկոլ Փաշինյանի ստեղծած արդարադատության համակարգում, իշխանական պատգամավորի թոռը չի պատժվի: ՀՀ քննչական կոմիտեից, ի պատասխան «Ժողովուրդ» օրաթերթի հարցի, հայտնել են. «Երեւան քաղաքի Ավան վարչական շրջանում գործող իրավատնտեսական համալսարանի բակում 2023 թվականի նոյեմբերի 27-ին ուսհաստատության երկու անչափահաս սանների միջեւ տեղի ունեցած միջադեպի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 171-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով նախաձեռնված քրեական վարույթով նախաքննությունն ավարտվել է: Քննության շրջանակներում պարզվել են նշված անչափահասներից մեկի կողմից մյուսին մարմնական վնասվածք հասցնելու բոլոր հանգամանքները: Հաշվի առնելով, որ նախաքննության ընթացքում ստացվել են նշված երկու անչափահասների դիմումներն առ այն, որ հաշտվել են միմյանց հետ եւ ցանկանում են, որ հաշտության հիմքով քրեական հետապնդում չիրականացվի, միջնորդություն է ներկայացվել դատախազություն՝ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի հիման վրա վարույթով հանրային քրեական հետապնդում չհարուցելու մասին, որը բավարարվել է, եւ քրեական վարույթը կարճվել է»: Իսկ թե ինչու է տուժողը հրաժարվել բողոքից, ճնշման ազդեցությամբ արդյոք, թե իրապես «բարիշել են», դեռ պետք է պարզել:

ԵԼՈՒՅԹ

ԼԻՆԵԼ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՃԻՇՏ ԿՈՂՄՈՒՄ

«Հայաստանի Հանրապետության ինքնիշխան տարածք նախորդ ներխուժումներից հետո Ադրբեջանի ռազմատենչ հռետորաբանությունը եւ ռազմական էսկալացիայի հրահրման փորձերը դեռ շարունակվում են: Ամօրինի ուժի կիրառման անդադարելիությունը հանգեցրել է Հայաստանի նկատմամբ տարածքային նոր պահանջների: Ներկայումս Հայաստանի Հանրապետության ողջ տարածքը ներկայացվում է որպես «Արեւմտյան Ադրբեջան», եւ դրա նպատակը տարածաշրջանում լարվածության պահպանումն է»,- հայտարարել է ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը՝ ՄԱԿ մարդու իրավունքների խորհրդի 55-րդ նստաշրջանի բարձրաստիճան հատվածի իր ելույթում:

Իր ելույթի սկզբում Միրզոյանը Հայաստանի անունից շնորհավորել է Մարդու իրավունքների խորհրդի նորընտիր Բյուրոյին՝ Մարոկկոյի դեսպան Ն.Գ. Օմար Զնիբերի նախագայությամբ, եւ մաղթել լավագույնն այս հեղինակավոր կառույցի ղեկավարման գործում:

«Մեկ տարի առաջ հենց այս ամբիոնից ՄԱԿ գլխավոր քարտուղարը զգուշացնում էր մարդու իրավունքների նկատմամբ հանրային անտարբերության եւ անհատական արհամարհանքի աճի մասին: Նա կոչ արեց լինել պատմության ճիշտ կողմում, նեցուկ կանգնել մարդու իրավունքներին ամենուր եւ բոլորի համար:

Անշուշտ, աշխարհն ավելի վտանգավոր վայր է դառնում, երբ մարդու իրավունքների նկատմամբ հավատարմությունը նվազում է, երբ մեր ընդհանուր սկզբունքներն ու նորմերը, մասնավորապես՝ միջազգային իրավունքը, մարդու իրավունքները եւ հումանիտար իրավունքը անտեսվում եւ զանգվածային կերպով ոտնահարվում են:

Հայաստանն այս հեղինակավոր խորհուրդը դիտարկում է որպես աշխարհով մեկ մարդու իրավունքների պաշտպանության եւ խթանման առանցքային հենասյուներից մեկը: Սա է պատճառը, որ Հայաստանն այս նստաշրջանում վերստին ներկայացրել է Ցեղասպանության կանխարգելման բանաձեւը: Վստահ ենք, որ Մարդու իրավունքների խորհուրդը պետք է շարունակի իր ներդրումը ցեղասպանության ողբերգությանը հակազդելուն ուղղված միջազգային ջանքերում, այդ թվում՝ գտնելով վաղ կանխարգելման եւ վաղ գործողությունների կարողությունների կատարելագործման ուղիներ»,- նշել է Արարատ Միրզոյանը:

ՀՀ ԱԳ նախարարի պնդմամբ՝ սկսած 2020-ից մարդու իրավունքների միջազգային իրավունքը ու միջազգային հումանիտար իրավունքը Հարավային Կովկասի տարածաշրջանում շարունակաբար խախտվել են, եւ վերջին երեք ու կես տարիների ընթացքում Լեռնային Ղարաբաղի ժողովուրդն անցել է ագրեսիայի ու պատերազմի, արտադատական սպանությունների, կամայական կալանքների, բռնի անհետացումների, կտտանքների, սովահարության եւ անմարդկային վերաբերմունքի այլ դրսեւորումների տառապանքներով: «Նրանք ստիպված էին դիմակայել Հայաստանի եւ արտաքին աշխարհի հետ միակ կապը հանդիսացող Լաչինի միջանցքի 10-ամսյա շրջափակմանը, որից հետո Ադրբեջանի կողմից իրականացված նոր ռազմական գործողությունների արդյունքում տարածաշրջանի բնիկ հայ բնակչությունը ենթարկվեց էթնիկ զտման:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ՋՐՈՒՅՑ

«ԱՅԴ ՎՏԱՆԳԸ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ Է»

Ամ արտաքին հարցերով մշտական հանձնաժողովի նախագահ Սարգիս Խանդանյանը ArmLur.am-ի հետ զրույցում մանրամասներ է ներկայացրել Նիկոլ Փաշինյանի մյունխենյան բանակցություններից:

Անդրադառնալով Փաշինյանի այն հայտարարությանը, որ մեծ է Ադրբեջանի կողմից հարձակման հավանականությունը, պատգամավորը նշում է՝ նման վտանգ միշտ էլ կա:

-Պարոն Խանդանյան, երեկ Նիկոլ Փաշինյանը հանդիպել է իշխանական պատգամավորների հետ, ամփոփել են Մյունխեն այցի արդյունքները: Կխնդրեմ, որքանով հնարավոր է, մի փոքր մանրամասնել՝ ինչ է նա ասել, մասնավորապես՝ նա Ադրբեջանի նախագահի հետ հանդիպումից հետո հայտարարեց, որ շատ հավանական է Ադրբեջանի հարձակումը Հայաստանի վրա: Ինչո՞ւ, ի՞նչ են այնտեղ զրուցել, որ Նիկոլ Փաշինյանը նման հայտարարություն արեց:

-Ուղիղ չեք մեջբերում վարչապետին. վարչապետը խոսել է լարվածության աճի մասին, այնուամենայնիվ, Մյունխենի հանդիպումից հետո այլ հայտարարություններ էլ են եղել: Տեղի է ունեցել հանդիպում, որտեղ խոսվել է սկզբունքների մասին, որոնք հայտնի են եւ կողմերի միջեւ դեռեւս համաձայնեցվել էին անցած տարվա ամռանը, եւ ընդհանուր տրամաբանությունն այն է, որ պետք է աշխատանքները շարունակվեն խաղաղության պայմանագրի շուրջ, դրա համար էլ առաջիկայում արտգործնախարարները կհանդիպեն:

-Պարոն Խանդանյան, այդ դեպքում ինչո՞ւ հանկարծ Նիկոլ Փաշինյանը նման եզրահանգման եկավ, արդյոք Ադրբեջանի նախագահի հետ բանակցություններ՞ն են նման առիթ տվել. ինչո՞ւ նման գնահատական տվեց, որ, հնարավոր է, Ադրբեջանը կրկին հարձակվի Հայաստանի Հանրապետության վրա:

-Այդ եզրակացության համար հանդիպել պետք չէր. Դուք հիշում եք սահմանային լարումը եւ նաեւ վերջին շրջանում Ադրբեջանի կողմից հնչեցված հայտարարությունները, հռետորաբանության ագրեսիվացումը, եւ այս իրավիճակում, քանի դեռ համաձայնություններ ձեռք չեն բերվել, կա նման վտանգ: Այդ վտանգը հենց այս պահին չծագեց, այդ վտանգը շարունակական է: Դա ընդհանուր իրավիճակի վերլուծության արդյունք է, դա հանդիպման հետ ուղղակի կապ չունի:

-Պարոն Խանդանյան, նաեւ Նիկոլ Փաշինյանն ասաց, որ, ըստ էության, ՀԱՊԿ-ում Հայաստանի Հանրապետության գործունեությունը այս պահի դրությամբ սառեցված է, ինչին հաջորդեց ՀԱՊԿ-ի արձագանքը, այնուհետեւ այլ երկրներ նույնպես արձագանքեցին: Արդյոք Նիկոլ Փաշինյանն այս հայտարարությամբ սկիզբ դրե՞ց ՀԱՊԿ-ից դուրս գալու գործընթացին:

-Դա իրականում վերջին տարիներին ՀԱՊԿ-ի հետ մեր հարաբերությունների՝ գոյություն ունեցող իրավիճակի արձանագրումն է: Հայաստանը վերջին շրջանում չի մասնակցել ՀԱՊԿ ֆորմատով հանդիպումներին եւ վեհաժողովներին: Պատճառների մասին մենք գիտենք. ՀԱՊԿ-ի գործողությունների կամ գործողությունների բացակայության հետեւանքով: Այո՛, այս տրամաբանությամբ առաջնորդվելով՝ պետք է արձանագրել, որ բովանդակային առումով ՀԱՊԿ-ի հետ հարաբերությունները սառեցված են: Իսկ ինչ վերաբերում է՝ դուրս գալու մեկնարկ է, թե ոչ, սա ժամանակի հարց է, ես չեմ կարող հիմա նման հայտարարություն կամ պնդում անել, բայց, այնուամենայնիվ, պետք է արձանագրել այս իրավիճակը եւ այս իրավիճակում ՀՀ-ն, ըստ էության, չի մասնացում ՀԱՊԿ-ի աշխատանքներին:

Ք. ՄՈՒՇԵՂՅԱՆ

ՏԵՂԱԿԱԼԻ ԿՆՈՋ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ ԿՐԿՆԱՊԱՏԿՎԵԼ Է

ՀՀ ՊԵԿ նախագահի տեղակալ Արտյոմ Սմբատյանի հայտարարագրերը լավագույնս արտացոլում են ՔՊ-ական իշխանավորի հետհեղափոխական դասական կյանքի ուղին: ՀՀ ՊԵԿ նախագահի 1-ին տեղակալ Արտյոմ Սմբատյանը մինչեւ 2018-ը աշխատում էր Պետեկամուտների կոմիտեի օպերատիվ-հետախուզական վարչությունում որպես օպերլիազոր: Հեղափոխությունից հետո՝ 2018թ.-ի հուլիսից մինչեւ սեպտեմբեր, աշխատել է Առողջապահության նախարարության Յոլյանի անվան արյունաբանական կենտրոնում, նոյեմբերից դեկտեմբեր՝ Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոնում, ապա՝ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոնում: 2019թ.-ի մարտից մինչ դեկտեմբեր Սմբատյանը եղել է Առողջապահության նախարարության գլխավոր քարտուղար: Այդ ընթացքում մամուլում հրապարակումներ եղան, որ Սմբատյանն իրավունք չուներ զբաղեցնելու Առողջապահության նախարարության գլխավոր քարտուղարի պաշտոնը եւ չի համապատասխանել այդ պաշտոնին առաջադրված պահանջներին: Գլխավոր քարտուղարից հետո Սմբատյանը նշանակվեց առողջապահության փոխնախարար, պաշտոնավարեց երկու տարի, իսկ 2021թ.-ի օգոստոսին նշանակվեց Պետեկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ: Առողջապահական ոլորտում Սմբատյանի անցած ուղին մեծ հնարավորություններ է տվել ոչ միայն իրեն, այլ նաեւ կնոջը եւ զոքանչին: Այսպիսով, եթե Սմբատյանի կինը՝ Գոհար Մկրտչյանը, 2019 թվականին «Սուրբ Գրիգոր Լուսավորչ» ԲԿ-ում վարձատրվում էր տարին 3,4 միլիոն դրամ, ապա մեկ տարի անց նրա տարեկան աշխատավարձը գրեթե կրկնապատկվում է՝ դառնալով 5,1 միլիոն դրամ: Եվ այս կտրուկ փոփոխությունները տեղի են ունենում այն ժամանակահատվածում, երբ Մկրտչյանի ամուսինը ճամփորդում է առողջապահական ոլորտի ցանկալի պաշտոններով: Ավելին՝ 2020 թվականին բժշկուհին՝ Գոհար Մկրտչյանը, սկսում է աշխատել միանգամից 3 հիվանդանոցում, իսկ մեկ տարի անց վաճառում է իր Nissan մակնիշի ավտոմեքենան եւ նույն օրը եռակի թանկ՝ 6,2 միլիոն դրամով, ձեռք է բերում BMW մակնիշի ավտոմեքենա: Սմբատյանի զոքանչի մասին դեռ 2022 թվականին մամուլը գրել էր, որ Կարինե Համբարյանի նյութական վիճակը վերջին տարիներին զգալիորեն բարելավվել է: 2019թ.-ին իր անունով ուներ գրանցված միայն մեկ բնակելի տուն, որը ժառանգություն է: Նա հասցրել է ձեռք բերել նաեւ մեկ բնակելի տուն Աջափնյակ վարչական շրջանում եւ բնակարան Աջափնյակում: Համբարյանի անունով գրանցված գույքերից ամենատպավորիչը Երեւանի Աբովյան փողոցում ձեռք բերված երկհարկանի բնակարանն է: Ստացվում է, որ ոչ միայն պատգամավորներն ու նախարարներն են օգտվում իրենց ընձեռնված «հնարավորությունից», այլ նաեւ նրանց ընկերները: Այդ ընկերները, ստացվում է, ավելի շատ ունեցվածք են կուտակում, քան նրանց հովանավորողները:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՈՒՆԻ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄ

Լեռնային Ղարաբաղից տեղահանված անձանց խնդիրն ու հայկական մշակութային ժառանգության ոչնչացման դեպքերը խիստ մտահոգիչ են եւ ոչ մի կերպ չեն կարող արդարացվել. այս մասին հայտարարեց Գերմանիայի Բունդեսթագի իրավական հանձնաժողովի նախագահ Էլիզաբեթ Վինքելմայեր-Բեքերը ՀՀ-ում Գերմանիայի դեսպանատանը կազմակերպված մամուլի ասուլիսի ժամանակ՝ ընդգծելով, որ Գերմանիայում անհնար է պատկերացնել մարդու հիմնարար իրավունքների նմանօրինակ խախտումներ, անհնար է պատկերացնել որեւէ էթնիկ խմբի բռնի տեղահանում:

Անդրադառնալով Լեռնային Ղարաբաղում 2020 թվականին եւ դրանից հետո Ադրբեջանի կողմից կատարված հանցագործություններին՝ Վինքելմայեր-Բեքերը նշեց, որ Միջազգային քրեական դատարանը պետք է հանգամանորեն քննի աշխարհի տարբեր կողմերում իրականացված պատերազմական բոլոր հանցագործությունները եւ դրանց վերաբերյալ հանդես գա հստակ գնահատականներով ու վճիռներով, առավել եւս, որ դրա համար ունի կոնկրետ գործիքակազմ: Ըստ նրա՝դա վերաբերում է նաեւ ռազմագերիների վերադարձին, որը կարող է լինել առանցքային կետ՝ խաղաղ գործընթացն առաջ մղելու, ինչպես նաեւ լավ հիմք՝ բանակցությունների արդյունքում դրական հանգրվանի հասնելու համար:

«Ուրախ կլինենք, եթե Գերմանիան նպաստի Հարավային Կովկասում կայունության հաստատմանը, հետեւաբար պատրաստ ենք երկու կողմերին աջակցել խաղաղության օրակարգն ու բանակցություններն առաջ մղելու գործում: Խաղաղության գործընթացի այս փուլում Գերմանիան պետք է հակամարտող կողմերի միջեւ հանդես գա որպես ազնիվ գործընկեր եւ աջակցող կողմ, ինչը բխում է Հայաստանի շահերից»,- ասաց Բունդեսթագի իրավական հանձնաժողովի նախագահը:

Վինքելմայեր-Բեքերը հայտնեց, որ ՀՀ արդարադատության նախարարը գերմանական պատվիրակության անդամներին տեղեկացրել է, որ հայկական կողմի համար կարեւոր բաղադրիչներից մեկը Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ սահմանագծման ու սահմանազատման գործընթացն է՝ հիմնված խորհրդային քարտեզների վրա:

«Հույս ունենք, որ դրանք հիմք կհանդիսանան երկարատեւ ստատուս-քվոյի համար հետագա համաձայնության շրջանակում: Սահմանազատման ու սահմանագծման գործընթացը գտնվում է նաեւ ԵՄ քաղաքացիական առաքելության ուշադրության կենտրոնում: Հույս ունենք, որ Հայաստանն ու Ադրբեջանը կհասնեն այնպիսի հանգրվանի, երբ Հայաստանի Հանրապետության միջազգայնորեն հստակեցված ու ճանաչված տարածքն այլեւս վիճարկման ենթակա չի լինի եւ հիմք կհանդիսանա կայուն խաղաղության համար»,- ասաց Վինքելմայեր-Բեքերը:

ՃԵՊԱՔՐՈՒՅՑ

«ԳԱՆ «ՋՎԱՐԹՆՈՑ»-ԻՑ ԻՆՁ ՈՒՂԵԿՑԵ՞Ն ԴՈՒՐՍ»

Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանն անթույլատրելի է համարում երկրում արտահերթ խորհրդարանական ընտրությունների անցկացումը. իշխող քաղաքական ուժը պատասխանատվություն է վերցրել ու մինչեւ վերջ կտանի:

Սիմոնյանը նման դիրքորոշում հայտնեց ԱԺ-ում լրագրողների հետ զրույցում՝ անդրադառնալով հարցին, թե արդյոք իշխանությունը նոր ընտրությունների մտադրություն ունի:

«Նոր ընտրություններն անթույլատրելի են: Դա պատասխանատվությունից փախչել է: ՀՀ քաղաքացիներն արդեն իրենց ընտրությունը կատարել են, եւ նման հարց չի քննարկվում, չի քննարկվել»,-ասաց Սիմոնյանը:

Ըստ նրա՝ սա պատասխանատու դիրքորոշում է եւ թիմի միասնական որոշումն է:

Սիմոնյանը հավելեց՝ իրենց քաղաքական ուժը վերցրել է պատասխանատվություն եւ մինչեւ վերջ կտանի: «Մենք առաքելություն ունենք՝ Հայաստանի Հանրապետությանը եւ մեր տարածաշրջանին խաղաղություն բերելը: Դրանից հետո ընտրությունների ժամանակը կգա, մենք կներկայացնենք մեր տեսլականը, մեր ընդդիմադիր գործիչները՝ իրենց տեսլականը: Եվ ՀՀ ժողովուրդը կրկին կգնա ազատ, արդար ընտրություններով կքվեարկի եւ կընտրի այն իշխանությանը, որ կգտնի ճիշտ»,-եզրափակեց ԱԺ նախագահը:

Հայաստանի ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանը կարծում է՝ ճիշտ կլինի, որ ռուս սահմանապահները դուրս գան «Ջվարթնոց» միջազգային օդանավակայանից:

Սիմոնյանը նման դիրքորոշում հայտնեց՝ անդրադառնալով լրատվամիջոցներում տարածված տեղեկատվությանը, թե «Ջվարթնոց» օդանավակայանից ռուս սահմանապահները դուրս են գալու:

«Ես նման քննարկման մասնակից չեմ եղել, բայց ես կարծում եմ, որ ճիշտ կլինի, որ իրենք այդտեղից դուրս գան»,-ասաց Սիմոնյանը՝ հավելելով, որ դա իր անձնական կարծիքն է:

ԱԺ նախագահը վստահ չէ, որ ռուս սահմանապահները Հայաստանի սահմանները կպաշտպանեն:

«Ապացուցվեց մի քանի անգամ, որ իրենք չպաշտպանեցին: Էլ չեմ ասում, որ հաճախ նաեւ ամեն ինչ արեցին, որ այդ սահմանները շատ ավելի խոցելի լինեն: Եկան Լեռնային Ղարաբաղ ի՞նչ արեցին. հայ ժողովրդին դուրս ուղեկցեցի՞ն, դա՞ էր պաշտպանել: Մի օր էլ գան «Ջվարթնոց»-ից ինձ ու ձեզ ուղեկցե՞ն դուրս»,-ասաց Սիմոնյանը:

Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանը դեմ չէ, որ Հայաստանը Թուրքիայի ու Ադրբեջանի հետ խաղաղ ապրի:

«Բոլոր երկրներն էլ պետք է իրար հետ խաղաղ ապրեն: Եվ ես դեմ չեմ Ադրբեջանի եւ Թուրքիայի հետ խաղաղ ապրելուն»,-ասաց ԱԺ նախագահը:

«Հայաստանի իշխանությունները կիսում են յուրաքանչյուր քաղաքացու վրդովմունքը, վերաբերմունքը ՀԱՊԿ-ի նկատմամբ»,-ասաց Հայաստանի ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանը՝ անդրադառնալով ՀԱՊԿ-ի աշխատանքներին մասնակցությունը սառեցնելու մասին Հայաստանի վարչապետի հայտարարությանը:

«Վարչապետն արձանագրել է, որ փաստացի մեր չմասնակցելը սառեցված հարաբերություն է: Մենք ՀԱՊԿ-ին մի հարց ենք տվել, որ մնացել է անպատասխան. ո՞րն է ՀԱՊԿ-ի պատասխանատվության գոտին, դուք ՀՀ սահմանը ճանաչո՞ւմ եք, ՀՀ-ն ՀԱՊԿ-ին ո՞ր սահմանով է անդամագրվել: Քանի դեռ այդ հարցի պատասխանը չկա, կարծում եմ, որ ՀԱՊԿ-ն ինքնին իրեն անջատել է ու չի աշխատում»,-ասաց Սիմոնյանը:

Անդրադառնալով հարցին, թե այդ դեպքում Հայաստանն ինչու դուրս չի գալիս ՀԱՊԿ-ից, ԱԺ նախագահը պատասխանեց. «Սպասում ենք, տեսնենք՝ինչ կլինի»:

Նա հորդորեց վստահել իշխող ուժի քաղաքական մարտավարությանը: «ՀՀ յուրաքանչյուր քաղաքացու վրդովմունքը, զայրույթը եւ վերաբերմունքը ՀԱՊԿ-ի նկատմամբ լիովին կիսում եմ ես եւ ՀՀ իշխանությունները»,-նշեց նա:

Ըստ Սիմոնյանի՝ այլընտրանքը յուրաքանչյուր հնարավոր միջոցով ՀՀ անվտանգությունն ապահովելն է ու ամբողջը մի զամբյուղի մեջ չդնելը: «Մենք այդպես արեցինք, եւ, երբ եկավ X պահը, երբ մենք վստահ էինք, որ անհնար է, որ մեր դաշնակիցը մեզ չպաշտպանի կամ թույլ տա քաղաքական մակարդակով, պարզվեց՝ մեր դաշնակիցը դա թույլ տվեց, ոչ միայն թույլ տվեց, այլ նաեւ շատ բաների վրա աչք փակեց»,-ասաց ԱԺ նախագահը:

Ըստ ԱԺ նախագահի՝ դա հակառուսական ալիք է բարձրացրել Հայաստանում:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԽԱՂԱՅԻՆ ԻՆԴՈՒՍՏՐԻԱ

ԿԴԱՌՆԱՆ ՍՏՈՒԳԵԼԻ ԵՎ ՎԵՐԱՀՍԿԵԼԻ

Հայաստանում առաջին անգամ կարելի կլինի իրականացնել խաղային ինդուստրիայի վերահսկում ժամանակի իրական ռեժիմում: Այս մասին Ազգային ժողովի նիստում «Խաղային գործունեության կարգավորման մասին» օրինագծում եւ կից օրենքներում լրացումներ կատարելու մասին օրինագծերի փաթեթի քննարկման ժամանակ՝ փետրվարի 27-ին, ասել է Պետեկամուտների կոմիտեի նախագահ Ռուսլան Քադասյանը:

Նա նշել է, որ բոլոր պահանջվող չափորոշիչները կդառնան ստուգվող: «Նախագծի ընդունման դեպքում խաղերի ոլորտում ընդգրկված ընկերությունների շրջանառությունները, ինչպես նաեւ դրույքների ծավալները կդառնան ստուգելի եւ վերահսկելի»,- ասել է ՊԵԿ նախագահը:

Կառանձնացվեն մոլախաղերի բոլոր տեսակները, դրանց թվում, մասնավորապես, տոտալիզատորները, բուկմեկերական գործունեությունը, մոլախաղերի այլ տեսակներ: Բացի այդ, կսահմանվեն խաղային ինդուստրիայի սուբյեկտների իրավունքները եւ պարտականությունները:

Միջազգայինին համապատասխանող տեխնիկական չափորոշիչների ներդրումը պարտադիր կլինի տնտեսվարող բոլոր սուբյեկտների համար:

Բացի այդ, նախատեսվում է ներդնել կառավարման էլեկտրոնային համակարգ: Այն ենթադրում է կազմակերպիչների ծրագրային ապահովման եւ տեղեկատվական համակարգերի տվյալների միացում խաղային ոլորտի կառավարման մոնիթորինգի կենտրոնին: Այս բոլոր փոփոխությունները, իշխանությունների կարծիքով, թույլ կտան ապահովել ճյուղի թափանցիկությունը, կազմակերպիչների չպարտադրվող վերահսկողությունը, ինչպես նաեւ տեղեկատվություն ստանալը նրանց իրական շրջանառության մասին:

Բացի գեմբլինգից եւ ինտելեկտուալ խաղերից, մնացած բոլոր խաղերը, որոնք շահույթ ունեն, ինչպես նաեւ մանկական խաղային սարքերը համարվելու են «շահ ունեցող այլ խաղեր»:

Մոլախաղերին մասնակցությունն արտասահմանում եւ դրանց գովազդը Հայաստանի Հանրապետության տարածքում կարգելվեն օրենքով:

Սահմանափակումներ կմտցվեն նաեւ որոշակի անձանց հանդեպ, օրինակ՝ նրանց հանդեպ, ովքեր օգտվում են պետության ֆինանսավորած սոցիալական աջակցության ծրագրերից: Սոցիալական բնակարան ստացող քաղաքացիները եւս կզրկվեն ժամանցի նման հնարավորությունից:

Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ

ԱՆՉԱՓԱՀԱՍԸ՝ ԹՄՐԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՎ

ՀՀ ֆինչական կոմիտեի Վայոց ձորի մարզային ֆինչական վարչությունում իրականացված բազմակողմանի ֆինությամբ ոտարզվել են Արմավիրի մարզի բնակիչ, երկու եղբայրների եւ Արարատի մարզի անչափահաս բնակչի կողմից ԻԻՀ-ից մաքսանենգ ճանապարհով ՀՀ ներկրված թմրամիջոցների ապօրինի շրջանառությամբ զբաղվելու դեպքի մի շարք հանգամանքներ:

ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախաձեռնված քրեական վարույթի շրջանակներում իրականացված անհրաժեշտ քննչական եւ վարութային այլ գործողությունների արդյունքում պարզվել է, որ եղբայրները, իրենց մտերիմ, 17-ամյա պատանու հետ ձեռք բերելով իրացնելու նպատակով ապօրինի թմրամիջոցների շրջանառությամբ զբաղվելու շուրջ նախնական պայմանավորվածություն, 2024թ. փետրվարի 21-ին եղբայրներից մեկի վարած «OPEL VECTRA 1.8» մակնիշի ավտոմեքենայով ժամանել են Վայոց ձորի մարզի Արենի բնակավայրի տարածք:

Անչափահաս մտերիմի հետ համապատասխան տեղորոշման հավելվածի օգտագործմամբ, նրանք փնտրել եւ գտել են քննությամբ դեռեւս պարզման ենթակա անձի կողմից նախապես տրամադրված՝ փաթեթավորված թմրամիջոցի գտնվելու կոնկրետ կոորդինատը: Հայտնաբերելով այն՝ 17-ամյա պատանին վերցրել է առանձնապես խոշոր չափերով՝ ընդհանուր 500 գրամ քաշով թմրամիջոցի նմանվող բյուրեղանման զանգվածով փաթեթը, մոտեցրել ավտոմեքենային, իսկ եղբայրներից մեկն այն ամրացրել է ավտոմեքենայի շարժիչի ծածկոցի տակ: Այնուհետեւ նույն մեքենայով, երիտասարդները ուղեւորվել են դեպի Երեւան: Սակայն ճանապարհին նույն օրը՝ ժամը 13:00-ին, հետաքննության մարմնի աշխատակիցների կողմից օպերատիվ տեղեկություններն իրացնելիս, համագործակցելով ՀՀ ԱԱԾ, ՀՀ ՆԳՆ ոստիկանության եւ պարեկային ծառայության ծառայողների հետ, Երեւան-Մեղրի միջպետական ավտոճանապարհի Արենի բնակավայրի տարածքում նրանք հայտնաբերվել են, ձերբակալվել եւ տեղափոխվել Ոստիկանության Եղեգնաձորի բաժին: Հիշյալ ավտոմեքենան տեղափոխվել է բաժնի պահպանվող հատուկ տարածք: Նախաքննության ընթացքում կատարված ավտոմեքենայի խուզարկությամբ վերը նշված փաթեթը հայտնաբերվել եւ վերցվել է:

Նշանակված դատանյութագիտական փորձաքննության եզրակացության համաձայն՝ փորձաքննությանը ներկայացված փաթեթում առկա 500 գրամ քաշով սպիտակ գույնի բյուրեղանման զանգվածը եղել է «Մեթամֆետամին» տեսակի թմրամիջոց: Ձեռք բերված բավարար փաստերի հիման վրա՝ հիշյալ երեք անձանց մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով: Եղբայրների նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանքը, իսկ 17-ամյա անչափահասի նկատմամբ՝ այլընտրանքային համակցված խափանման միջոցներ՝ գրավ, դաստիարակչական հսկողության հանձնել եւ չբացակայելու արգելք:

Նախաքննությունը շարունակվում է: Միջոցներ են ձեռնարկվում թմրամիջոցի ձեռք բերման աղբյուրը, իրացման նպատակով թմրամիջոցի ապօրինի շրջանառության մեջ ներգրավված այլ անձանց հայտնաբերելու եւ քրեական պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ:

Ծանուցում. հանցանքի համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀԱՏՈՒԿ ՕՊԵՐԱՑԻԱ

«ԴԼՈՆ ՄՆԱՑ ԱՌԱՆՑ ՏՈՐԹ»

Փետրվարի 23-ին ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության Լոռու մարզային վարչության քրեական հետախուզության բաժնի ծառայողները՝ վարչության պետ Արթուր Զաքարյանի գլխավորությամբ, ՀՀ ՆԳՆ ոստիկանության Տարոնի բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի ծառայողները՝ բաժնի պետ Արսեն Աղումյանի եւ քրեական հետախուզության բաժանմունքի պետի տեղակալ Կիրակոսյանի գլխավորությամբ, Լոռու մարզում իրականացրել են հատուկ օպերացիա, որը կրել է ««Դլոն» մնաց առանց տորթ» անունը. հաղորդում է Shamshyan.com-ը:

Այդ օրը ոստիկանության Լոռու մարզային վարչությունում ու ոստիկանության Տարոնի բաժնում օպերատիվ տեղեկություններ են ստացվել, որ փետրվարի 23-ին՝ սովետական բանակի օրվա առթիվ ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկում իր պատիժը կրող Դլո մականունով Արթուրին պետք է թմրամիջոց ուղարկվի հրուշակեղենի տեսքով:

Անմիջապես մարզի ոստիկանապետ Ա. Զաքարյանի գլխավորությամբ ոստիկանները գործի են անցնում ու պարզում որոշ հանգամանքներ:

Ըստ օպերատիվ տեղեկությունների՝ Լոռու մարզի բնակիչ 38-ամյա Արշավիր Ա.-ն ձեռք է բերել թմրամիջոց եւ այն ցանկացել է հրուշակեղենի (տորթ) մեջ քողարկելու միջոցով իրացնել «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկում: Տորթը պետք է հանձնվեր Դլո մականունով Արթուրին:

Դեպքի փաստով ոստիկանության Տարոնի բաժնում փաստաթղթեր են ձեւակերպվում, որոնք փոխանցվում են Հայաստանի քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչություն, իսկ նույն օրը ՀՀ Քր օր.-ի 393 հոդվածի հատկանիշներով հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայությամբ ոստիկանության Լոռու մարզային վարչության քրեական հետախուզության բաժնի, ոստիկանության Տարոնի բաժնի եւ ՀՀ ՆԳՆ ոստիկանության Պարեկային ծառայության Լոռու մարզի պարեկները Լոռու մարզում ձերբակալում եւ Տարոնի բաժին են բերման ենթարկում Լոռու մարզի բնակիչներ 38-ամյա Արշավիր Ա.-ին, 24-ամյա Կարեն Մ.-ին, 17-ամյա Արայիկ Մ.-ին, 22-ամյա Հարություն Դ.-ին:

Նույն օրը ՀՀ Քր օր.-ի 46-393 հոդվածի հատկանիշներով հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայությամբ ձերբակալվում եւ ոստիկանության Տարոնի բաժին է տեղափոխվում Լոռու մարզի բնակիչ 32-ամյա Հասմիկ Բ.-ն:

Որոշ ժամանակ անց բերման ենթարկվածներից մեկի մոտ հայտնաբերվում է ստվարաթղթե արկղ, որի մեջ էլ լինում է հրուշակեղեն (տորթ), եւ նա հայտնում է, որ փետրվարի 23-ին «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկից իրեն է զանգահարել այնտեղ իր պատիժը կրող Դլո մականվամբ Արթուրը եւ հայտնել, որ իրեն պետք է փոխանցեն տորթը, որը ինքը պետք է բերի «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկ, որ այն հասնի իրեն:

Ոստիկանները պարզել են նաեւ՝ ում համաձայնությամբ է տորթը պատրաստվել, եւ ով է այն թխել: Պարզվել է, որ մինչեւ տորթը պատրաստելը այն թխողին տվել են ապակյա շշով լուծույթ, որի մեջ եղել է թմրանյութ, ու տորթը պատրաստելուց առաջ ապակյա շշի մեջ եղած ողջ լուծույթը լցրել են տորթի մեջ ու այն փոխանցել են Արշավիր Ա.-ին:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՎԹԱՐ

ՕՊԵՐԱՏԻՎ ԵՆ ԳՈՐԾԵԼ

Փետրվարի 27-ին ավտովթար է տեղի ունեցել Երեւանում: Ժամը 08:30-ի սահմաններում Երեւանի բնակիչ 46-ամյա Վահան Ա.-ն իր վարած Toyota Camry մակնիշի ավտոմեքենայով Մյասնիկյան պողոտայում՝ «Արքայաձոր» ռեստորանային համալիրի դիմաց, դուրս է եկել ճանապարհի երթեւեկելի գոտուց, բախվել բազալտե եզրաքարին եւ առաջ ընթանալով՝ բախվել արտաքին լուսավորության երկաթե սյանը:

Ինչպես դեպքի վայրից հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, վթարի հետեւանքով վարորդը, ում առաջինը օգնության են հասել քաղաքացիներն ու օպերատիվորեն ժամանած Երեւանի շտապօգնության բժիշկների հերթապահ խումբը, տեղափոխվել է «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն:

Օպերատիվորեն դեպքի վայր են ժամանել ՀՀ ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Երեւանի թիվ 8-րդ հրշեջ-փրկարարական ջոկատից 1 մարտական հաշվարկ:

Ժամանել են նաեւ ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության Երեւան քաղաքի գնդի 3-րդ գումարտակի 3-րդ վաշտի պարեկները՝ գումարտակի հրամանատար Գոռ Առաքելյանի, վաշտի հրամանատար Արմեն Զաքարյանի գլխավորությամբ:

Տեղում ծառայություն են կատարել նույն վաշտի ավագ պարեկ Արմեն Խալաթյանը, պարեկներ Արթուր Մուրադյանն ու Լուսինե Պետրոսյանը:

Վթարի մասին ՊԾ Երեւան քաղաքի գնդից տեղեկությունը փոխանցել են Հայաստանի քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության ճանապարհատրանսպորտային հանցագործությունների քննության բաժին, որտեղից ժամանել է քննչական խումբը՝ բաժնի պետ Գոռ Թադեւոսյանի եւ օրվա պատասխանատու հերթապահ քննիչի գլխավորությամբ:

Վթարի փաստով քննչական բաժնում նախաձեռնվել է քրեական վարույթ:

Գ. Շամշյանի տեղեկություններով՝ ավտոմեքենան հաշվառված է «Գազպրոմ Արմենիա» ՓԲ-ի հաշվեկշռում:

Ծանուցում. ենթադրյալ հանցանքի մեջ կասկածվողը կամ մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ փետրվարի 23-ից 26-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումները բացահայտել են հանցագործության 180 դեպք, որոնցից 11-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՔ

ԱՐԴԱՐԱՑՐԵԼ ԵՆ ՔՆՆԻՉԻՆ

Դիլիջան համայնքի Հաղարծին գյուղի գտնվող առանձնատներից մեկից 2023թ. նոյեմբերին գողացել են շուրջ մեկ միլիոն դրամի ապրանքներ՝ շինարարական էլեկտրական գործիքներ,օղի թորելու պղնձե սարք, նաեւ փչացրել են 150 լիտր օղի: Տուժող, իրավաբան Գեղամ Գուլինյանը փետրվարի 13-ին գողության գործը քննող, քննչական կոմիտեի Դիլիջանի բաժնի քննիչ Արմեն Ավետիսյանի վերաբերյալ դիմում-բողոք է ուղարկել Քննչական կոմիտեի նախագահ Արգիշտի Քյարամյանին, ուր հայտնել է, որ գողության մասին հայտնելուց անցել է մեկ ամիս, սակայն ինքը ոչ մի արձագանք չի ստացել քննիչ Ա. Ավետիսյանից. երբ ինքը այցելել է քննչականի Դիլիջանի բաժին, միջանցքում պատահաբար հանդիպել է քննիչ Ա. Ավետիսյանին, որն իրեն ասել է. «Լավ է, որ եկել ես. քեզ պիտի կանչեի բաժին ցուցմունք տալու համար»: Դեպքից մեկ ամիս, 12 օր անց քննչական բաժին են հրավիրել Գ. Գուլինյանի կնոջը՝ ուսուցչուհի Լիանա Ղազինյանին, հարցաքննվելուց հետո Լիանան քննիչին հարցրել է՝ նայե՞լ եք մեր տան ճանապարհին, հարեւանի տանը տեղադրված տեսանկարահանող սարքը, որի մասին ձեզ հայտնել ենք դեպքի օրը, քննիչը պատասխանել է՝ դա ձեր գործը չէ, չենք նայել, կնայենք, Լիանան ասել է՝ չե՞ք ուշացնում, սարքը մեկ ամիս հետո կարո՞ղ է նկարածը պահել: Նույն օրը քննիչը եւ թաղային լիազորը գնացել են հարեւանի տուն, տանտերն ասել է՝ շատ ուշ եք եկել, սարքի կրիչի հիշողությունը 10-12 օր է: 2024թ. հունվարի 5-ին տուժած ամուսինները Քննչական կոմիտեի Դիլիջանի բաժին են գնացել, որ նորություն իմանան, քննիչը հեգնել է. «Ժողովո՛ւրդ ջան, ես էստեղ նստած կոֆեի բաժակ նայող չեմ, որ բաժակի մեջ նայեմ, տեսնեմ ո՞վ է ձեր տանից գողություն արել, գնացե՛ք. որ իմանամ, խաբար կանեմ, կգաք, դուք էլ կիմանաք»: Ամուսինները նրան ասել են. «Նախորդ անգամ Դուք ասացիք, որ գիտեք, թե ով է գողացել, սակայն ապացույցներ չունեք»: Ա. Ավետիսյանը գոռացել է. «Գնացե՛ք, ում ուզում եք, բողոքեք, տենամ՝ ով կարա ինձ մի բան ասի. ես բոլոր իրավունքներով լիազորված քննիչ եմ, ոչ մեկն էլ չի կարող գալ ու ձեր գործը բացի»: Գ. Գուլինյանը փետրվարի 21-ին ստացել է ՀՀ քննչական կոմիտեի տարածքային քննչական վարչությունների գործունեության վերահսկողության գլխավոր վարչության պետ Կ. Շառոյանի պատասխանը, որտեղ քննիչ Արմեն Ավետիսյանին պատասխանատվության ենթարկելու պահանջով դիմումի վերաբերյալ մասնավորապես նշված է. «Քրեական գործով վարույթն իրականացնող քննիչի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հիմքեր չեն հայտնաբերվել»:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Տավուշ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ԾԱՆԾԱՂ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄՆԵՐ Է ԿԱՏԱՐՈՒՄ»

Գարդման-Շիրվան-Նախիջեւան համահայկական միությունը խստորեն դատապարտում է ադրբեջանական քաղաքական երեսպաշտությունը՝ ի դեմս Ադրբեջանի արտգործնախարարության տարածած հայտարարությունների, որոնք ոչ այլ ինչ են, եթե ոչ սեփական հանցանքները թաքցնելու համար հորինված մեղադրանքներ:

Ներկայացնում ենք միության տարածած հաղորդագրությունը.

«Ադրբեջանի արտաքին գործերի նախարարությանը հայտարարություն է տարածել՝ շարունակելով Հայաստանի հասցեին հերյուրանքներ սփռելու պետական գիծը: Ադրբեջանական ողջ պետական-հասարակական համակարգը, որը մոռացության էր մատնել միջազգային իրավունքն ու իրավարար կառույցների հռչակագրերն ու կոնվենցիաները, այժմ հանկարծ վերհիշել է դրանց գոյության մասին եւ ինչ-որ ծանծաղ արձանագրումներ է կատարում ցեղասպանությունների կանխարգելման եւ մարդու իրավունքների պաշտպանության, ռասայական խտրականության բացառման եւ այլնի վերաբերյալ:

Արտաքին գործերի նախարարության մակարդակով հնչող նման ձեւակերպումները բնականորեն հարցեր են առաջացնում. արդյոք Ադրբեջանը պատրա՞ստ է իր հռչակած միջազգային իրավունքի նորմերի կիրառականությունը ճանաչել ցանկացած պարագայում, ինչպես, օրինակ, 1988թ. Սումգայիթի, 1990թ. Բաքվի, 1992թ. Մարաղայի եւ հայաբնակ այլ վայրերի կոտորածների կապակցությամբ, թե՞ այս անգամ եւս գործ ունենք ընտրանքայնության եւ ստահոդ իրողությունների վրա կառուցված թեզերի տարածման հետ: Արդյոք Ադրբեջանը համանմանություններ չի՞ գտնում Ցեղասպանության կոնվենցիայի դրույթների եւ Լեռնային Ղարաբաղի 10-ամսյա շրջափակման առաջացած հումանիտար աղետի հետեւանքների միջեւ, 2023թ. սեպտեմբերի 19-20 -ի պատերազմի ժամանակ քաղաքացիական ենթակառուցվածքների թիրախավորումը մի՞թե պատերազմական հանցանք չէ: Էթնիկ զտման եւ բռնի տեղահանության ընթացքում արձանագրվել է 64 քաղաքացիական անձանց մահ, որի ամբողջ պատասխանատվությունն ընկնում է ադրբեջանական էթնոֆոբ քաղաքականության վրա:

Սակայն էլ ավելի զազրելի են ռասայական խտրականության եւ էթնիկ ատելության մասին ադրբեջանական աղաղակումները: Արդեն տասնամյակներ է, ինչ ադրբեջանական հասարակությունը սնվում է հայության նկատմամբ էթնիկ ատելության թույնով, ինչը հանգեցրել է Ռամիլ Սաֆարովի կողմից քնած հայ սպայի դաժանագույն սպանությանը կամ Կամիլ Ջեյնալլլի ու իր նմանների կողմից 44-օրյա պատերազմի ժամանակ եւ անգամ դրանից հետո քաղաքացիական անձանց սպանությանն ու խոշտանգմանը:

Գարդման-Շիրվան-Նախիջեւան համահայկական միությունը խստորեն դատապարտում է ադրբեջանական քաղաքական երեսպաշտությունը՝ ի դեմս Ադրբեջանի արտգործնախարարության տարածած հայտարարությունների, որոնք ոչ այլ ինչ են, եթե ոչ սեփական հանցանքները թաքցնելու համար հորինված մեղադրանքներ: Մենք կոչ ենք անում նախ առերեսվել Սումգայիթի, Բաքվի, Մարաղայի ջարդերի, պատմական Գարդմանի, Շիրվանի, Նախիջեւանի այլ հայաբնակ վայրերի հայաթափման հանցանքին, ինչպես նաեւ Լեռնային Ղարաբաղի էթնիկ զտմանն ու ցեղասպանությանը եւ դիմել հստակ քայլերի՝ հայության ոտնահարված անօտարելի իրավունքների անվտանգ ու միջազգայնորեն երաշխավորված վերականգնման համար»:

ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ

ՍՈՒՄԳԱՅԻԹՅԱՆ ՋԱՐԴԵՐ

ԱԳՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ ԱԳՆ-ն հայտարարություն է տարածել Սումգայիթի ջարդերի 36-րդ տարելիցի կապակցությամբ, որը ներկայացնում ենք ստորեւ.

«1988 թ. փետրվարի 27-ին Խորհրդային Ադրբեջանի ղեկավարության նախաձեռնությամբ եւ բացարձակ թողտվության պայմաններում մեկնարկեցին Սումգայիթի հայ բնակչության ջարդերը, որոնք ուղեկցվեցին բռնությունների, դաժանությունների, բռնի անհետացումների, ունեզրկման, մարդու իրավունքների զանգվածային ոտնահարումների դեպքերով: Սպանվեցին հարյուրավոր հայեր, այդ թվում՝ կանայք, երեխաներ եւ ծերեր, իսկ հազարավոր հայեր բռնի տեղահանվեցին:

Սումգայիթյան ողբերգությանը հաջորդեցին Կիրովաբադի, Բաքվի եւ Ադրբեջանի այլ հայաշատ բնակավայրերի հայության ջարդերը: Այս շղթայական իրադարձությունները, ինչպես դրանցից առաջ Նախիջեւանի ամբողջական հայաթափումը, ցույց տվեցին, որ հիշյալ ոճրագործությունները ոչ թե ազգայնամոլության հիմքի վրա բռնությունների առանձին դրվագներ էին, այլ պետականորեն ծրագրված եւ իրականացված հայատյացության քաղաքականության հերթական դրսեւորումներ: Այդ քաղաքականության հետեւանքով Խորհրդային Ադրբեջանից բռնի տեղահանման ենթարկվեց շուրջ 500 հազար էթնիկ հայ:

Հատկանշական է, որ այդ իրադարձությունները թիրախավորել են ոչ միայն հայ բնակչությանը. դրանք ուղեկցվել են նաեւ հայկական ժառանգության եւ ընդհանուր առմամբ հայկական հետքի վերացման կանխամտածված գործողություններով:

Արդեն 21-րդ դարում լիակատար անպատժելիության պայմաններում Ադրբեջանի նույն քաղաքականության շարունակությունն էր Լեռնային Ղարաբաղի բնիկ հայության ահաբեկման, անմարդկային շրջափակման, սովամահության մատնելու եւ, ի վերջո, ուժի կիրառման միջոցով Լեռնային Ղարաբաղն ամբողջությամբ հայաթափելու, էթնիկ զտման ենթարկելու քաղաքականությունը, որն ավարտին հասցվեց՝ անգամ ի հեճուկս ՄԱԿ Արդարադատության միջազգային դատարանի կողմից ընդունված իրավաբանական պարտադիր ուժ ունեցող երեք որոշումների:

Այսօր էլ Ադրբեջանը շարունակում է իր վերահսկողության ներքո հայկական որեւէ հետքի վերացմանն ուղղված քաղաքականությունը՝ պղծելով, վանդալիզմի ենթարկելով եւ ոչնչացնելով հայկական կրոնական ու պատմամշակութային կոթողները: Այսօր էլ արդեն Հայաստանի Հանրապետության դեմ շարունակվող այլատյաց եւ թշնամական քաղաքականությունն ուղեկցվում է բարձրագույն մակարդակով հնչող ատելության խոսքով, սպառնալիքներով եւ ագրեսիվ հռետորաբանությամբ, որը խոչընդոտ է ժողովուրդների միջեւ թշնամանքի հաղթահարման եւ տարածաշրջանում խաղաղության եւ կայունության հաստատման ճանապարհին:

Միջազգային հանրությունը պետք է համարժեք գնահատական տա տեղի ունեցած զանգվածային ոճրագործություններին եւ գործարկի առկա բոլոր մեխանիզմները՝ կանխելու նման ոճրագործությունների կրկնությունը եւ նպաստելու Հարավային Կովկասում արժանապատիվ եւ տեւական խաղաղության հասնելու Հայաստանի անկեղծ ձանքերին»:

Ն. ԱՂԱՍՅԱՆ

● *Անցած 3 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 25 պատահար. 1 մարդ զոհվել է, 35-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

ՆՈՐ ՀԱՍՏԻՔՆԵՐ

Հայաստանում կներդրվի նաեւ մարտական խնդիրների իրականացման, պլանավորման կամ վերահսկողության գործառույթներ չունեցող, պաշտոններ զբաղեցնող պայմանագրային զինծառայողների ատեստավորման համակարգ:

«Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին եւ «Պետական պաշտոններ եւ պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծերի փաթեթն ԱԺ նիստում ներկայացրեց պաշտպանության փոխնախարար Կարեն Բրուտյանը:

Զինված ուժերում գործող հաստիքները բաժանվում են զինվորական եւ ոչ զինվորական հաստիքների: Ոչ զինվորական հաստիքներն են քաղաքացիական ծառայողներն ու քաղաքացիական աշխատանք կատարողները: Ոչ զինվորական ծառայողների վարձատրության չափի մասով հիմնական մոտեցումն այն է, որ, լինելով քաղաքացիական մասնագետներ, այս ծառայողները պետք է ստանան մրցակցային, մասնավոր հատվածի միջինից բարձր աշխատավարձ, որ հնարավոր լինի երկրում առկա որակյալ աշխատուժը ներգրավել զինված ուժեր:

Մարտական գործառույթներին անմիջականորեն չմասնակցողները հիմնականում իրականացնում են մարտականի հետ կապված մասնագիտական, ապահովման, կազմակերպման, սպասարկման, ինչպես նաեւ վարչական բնույթի այլ գործառույթներ: Ելնելով այդ գործառույթների բնույթից ու ծառայության պայմաններից՝ այդ հաստիքները պետք է լինեն զինվորական:

«Կառավարությունն առաջարկում է սահմանել մարտական խնդիրների իրականացման, պլանավորման կամ վերահսկողության գործառույթներ չունեցող, պաշտոններ զբաղեցնող պայմանագրային զինծառայողների ատեստավորման համակարգ: Ի տարբերություն ատեստավորման գործող՝ մարտականի համակարգի, այս խմբում ներառված զինծառայողները կհանձնեն միայն կրակային պատրաստության եւ մասնագիտական գիտելիքների թեստերը, այսինքն՝ շարային ու ֆիզիկականը չեն հանձնի»,-ասաց փոխնախարարը:

Ատեստավորման դրական արդյունքների դեպքում վճարվող հավելումների չափը մարտականի չափից քիչ կլինի: Քննարկվում է 50-70 տոկոս չափը: Որոշումը դեռ կառավարության կողմից կկայացվի:

Միաժամանակ առաջարկվում է ատեստավորման արդյունքներով անբավարար գնահատված զինծառայողների համար ատեստավորման քննությունը վերահանձնելու հնարավորություն ընձեռել:

ՊԵԿ

79.891.700 ԴՐԱՄԻ ՎՆԱՍ՝ ՊԵՏՈՒԹՅԱՆԸ

Պետական եկամուտների կոմիտեի նախագահի հանձնարարագրով՝ 2019 թվականի հոկտեմբերի 24-ին Բնապահպանության եւ ընդերքի տեսչական մարմինը ստուգումներ է իրականացրել ՍՊ ընկերությանը հատկացված՝ Էրեբունի վարչական շրջանի Դավիթ Բեկ փողոցին կից գտնվող տարածքում:

Ինչպես տեղեկանում ենք Գլխավոր դատախազության տարածած հաղորդագրությունից, իրականացված ստուգումներով տեսչական մարմնի աշխատակիցները կազմել եւ Պետական եկամուտների կոմիտե են ներկայացրել մասնագիտական եզրակացություն՝ ՍՊ ընկերության կողմից 40972.5 խմ բազալտի օգտակար հանածո տեղահանված լինելու վերաբերյալ:

Քրեական վարույթով տվյալներ են ձեռք բերվել, որ Բնապահպանության եւ ընդերքի տեսչական մարմնում ղեկավար պաշտոն զբաղեցրած անձն ու Իրավական աջակցության եւ փաստաթղթաշրջանառության վարչությունում ղեկավար պաշտոն զբաղեցրած անձը ՍՊ ընկերության կողմից կատարված իրավախախտումը թաքցնելու նպատակով կազմել են կեղծ տեղեկություններ պարունակող պաշտոնական փաստաթղթեր:

Մասնավորապես, 2020 թվականի մարտի 14-ին Բնապահպանության եւ ընդերքի տեսչական մարմնի ղեկավարի անունից կազմվել, ստորագրվել եւ ՊԵԿ նախագահին է հասցեագրվել գրություն, որում ներառված են եղել կեղծ տեղեկություններ այն մասին, թե լրացուցիչ ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ արտահանված 40972.5 խմ բազալտի օգտակար հանածոն կարող էր բնական տեկտոնական պրոցեսների հետեւանքով առաջացած փլուզումների պատճառով թափված լիներ տարածք:

ՊԵԿ նախագահի գրավոր հարցադրումներին ի պատասխան՝ բնապահպանական վերահսկողության բացակայության պայմաններում 2020 թվականի մարտի 25-ին Բնապահպանության եւ ընդերքի տեսչական մարմնի ղեկավարի անունից կազմվել եւ ՊԵԿ նախագահին է հասցեագրվել գրություն, որում կրկին ներառված են եղել կեղծ տեղեկություններ այն մասին, թե ՍՊ ընկերությունում իրականացված ստուգման շրջանակներում ընդերքօգտագործում իրականացնելու փաստ չի արձանագրվել, եւ խախտում առկա չէ:

Վերոնշյալ գրության հիման վրա՝ ՍՊ ընկերությունում իրականացված ստուգմամբ ՊԵԿ-ի կողմից խախտումներ չեն արձանագրվել, կազմվել է զրոյական ակտ, ինչի հիման վրա ՍՊ ընկերության կողմից «Ընդերքի մասին» օրենքով նախատեսված իրավախախտման համար պատասխանատվության միջոց չի կիրառվել, արդյունահանված օգտակար հանածոների համար բնօգտագործման համարժեք վճարներ չեն հաշվարկվել:

Արդյունքում պետությանը պատճառվել է առանձնապես խոշոր չափերի՝ 79 մլն 891 հազար 700 դրամի գույքային վնաս:

Դատախազը 2024 թվականի փետրվարի 13-ին վերոնշյալ երկու անձանց նկատմամբ հարուցել է հանրային քրեական հետապնդում՝ 18.04.2003 թվականին ընդունված Քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով (պաշտոնեական լիազորությունները չարաշահել) եւ 314-րդ հոդվածի 1-ին մասով (պաշտոնեական կեղծիք):

Դատախազը 2024 թվականի փետրվարի 21-ին հաստատել է մեղադրական եզրակացությանը եւ վարույթի նյութերի հետ հանձնել դատարան:

Դատախազությունը կներկայացնի քաղաքացիական հայց՝ պետությանը պատճառված գույքային վնասը վերականգնելու նպատակով:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԳԱՎԱՌ

ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ 3 ԾՐԱԳԻՐ

Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի Լանջաղբյուր գյուղում ՀՀ կառավարության կողմից 2022 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում 2023 թվականին կառուցվել է արտաքին լուսավորության ցանց, մանկական խաղահրապարակ եւ ավտոտրանսպորտային սպասարկման կանգառ:

Սուբվենցիոն 3 ծրագրի իրականացման համար ներդրվել է 28 միլիոն 966 հազար 994 դրամ, որից 14 միլիոն 691 հազար 297 դրամը՝ ՀՀ կառավարության, 14 միլիոն 275 հազար 697 դրամը Գավառի համայնքապետարանի մասնաբաժինն է:

Լանջաղբյուրի արտաքին լուսավորության ցանցի կառուցման պայմանագրային արժեքը կազմում է 9 միլիոն 61 հազար դրամ, որի 60 տոկոսը հատկացրել է ՀՀ կառավարությունը, 40 տոկոսը՝ Գավառի համայնքապետարանը: Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2023 թվականի մայիսից եւ ավարտվել հոկտեմբերին: Ծրագրի իրականացման արդյունքում արտաքին լուսավորության ցանց է կառուցվել Լանջաղբյուրի Նալբանդյան, Հաղթանակի, Արտաշես Առաջին, Մամիկոնյան փողոցներում եւ Իլիկավանք տանող ճանապարհին՝ 2500 մ երկարությամբ: Տեղադրվել է ԼԵԴ համակարգով աշխատող 70 լուսատու: Վերոնշյալ փողոցների բնակիչները արտաքին լուսավորության ցանցից օգտվում են առաջին անգամ:

Լանջաղբյուրի մանկական խաղահրապարակի եւ պուրակի կառուցման պայմանագրային արժեքը կազմում է 13 միլիոն 965 հազար 994 դրամ, որի 45 տոկոսը հատկացրել է ՀՀ կառավարությունը, 55 տոկոսը՝ Գավառի համայնքապետարանը: Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2023 թվականի օգոստոսից եւ ավարտվել դեկտեմբերին: Խաղահրապարակը եւ պուրակը կառուցվել են Լանջաղբյուրի մանկապարտեզի տարածքում: Ծրագրի իրականացման արդյունքում խաղահրապարակ-պուրակը կահավորվել է մանկական խաղարաններով, զրուցարան-տաղավարներով, կառուցվել է լուսավորության ցանց, ցայտաղբյուր:

Լանջաղբյուրի ավտոտրանսպորտային սպասարկման կանգառի կառուցման պայմանագրային արժեքը կազմում է 5 միլիոն 940 հազար դրամ, որի 50 տոկոսը հատկացրել է ՀՀ կառավարությունը, 50 տոկոսը՝ Գավառի համայնքապետարանը:

Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2023 թվականի հուլիսից եւ ավարտվել օգոստոսին:

Ծրագրի իրականացման արդյունքում Գավառի պատմամշակութային հուշարձանների պատկերով ու նկարագրով արտացոլված կանգառ է կառուցվել Գեղարքունիք-Գավառ մարզային նշանակության ճանապարհի Լանջաղբյուրի հատվածում:

Է. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

«ՏԻՐԱՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ»

ՈՐԲԱՏԱՆ ԵՐԵԽԱՆԵՐԸ՝ ԵՐԳՉԱԽՄԲԻ ԿԱԶՄՈՒՄ

Դիրիժոր, ՀՀ ժողովրդական արտիստ Ռոբերտ Մլքեյանի ղեկավարությամբ Հայաստանի պետական կամերային եւ «Տիրամայր Հայաստանի» երգչախմբերը մտադիր են համատեղ հնչեցնել ականավոր կոմպոզիտոր Ֆրանսիս Պուլենկի «Ստաբատ մատեր» ստեղծագործությունը:

Համերգային երեկոն նախատեսվում է կազմակերպել Ֆրանկոֆոնիայի շրջանակում ապրիլի 27-ին «Արամ Խաչատրյան» համերգասրահում:

Ռոբերտ Մլքեյանն ասում է՝ երգչախմբերը հանդես են գալու նվագախմբի ուղեկցությամբ: «Նվագախումբը բաղկացած է լինելու հրավիրյալ երաժիշտներից: Այն դառնալու է սիմֆոնիկ նվագախումբ, սակայն հիմքում Հայաստանի պետական կամերային նվագախումբն է լինելու»,-նշում է Մլքեյանն ու հավելում՝ այժմ համերգի կայացման վերաբերյալ պայմանավորվածություններ են ձեռք բերվում, հստակեցումներ են արվում:

Հայաստանի պետական կամերային երգչախումբը մի քանի անգամ Երեւանյան բեմում ներկայացրել է «Ստաբատ մատեր»-ը, սակայն «Տիրամայր Հայաստանի» երգչախումբն առաջին անգամ է այն կատարելու:

«Տարիքային մեծ տարբերություն կա կոլեկտիվների միջեւ: Հայաստանի պետական կամերային երգչախումբն արդեն քսանչորս տարեկան է, անհավանական թվով համերգներ է ունեցել»,-ասում է երգչախմբի գեղարվեստական ղեկավարն ու գլխավոր դիրիժորը, որը սիրով է վերհիշում «Տիրամայր Հայաստանի» երգչախմբի ստեղծման պատմությունը:

Մլքեյանը երկար տարիներ Գյումրիի պետական սիմֆոնիկ նվագախումբն է ղեկավարել: Այն պետական կարգավիճակ է ստացել հենց Մլքեյանի օրոք, ինչին նպաստել է կոլեկտիվի ստեղծագործական գործունեությունը:

«Այն ժամանակ Գյումրիում նաեւ երգչախումբ ունեի, որը շատ բարձրակարգ էր: Ավա՜ղ, կյանքն այնպես դասավորվեց, որ ինձ թույլ չտվեցին մնալ այնտեղ, կանչեցին Երեւան, որտեղ սկսվեց իմ բուռն աշխատանքը: Այստեղ եւս բարձրակարգ երգչախումբ ստեղծելու պահանջ կար, եւ ես բոլոր ուժերս ուղղեցի դրան, բայց Գյումրին սրտիցս ու մտքիցս դուրս չեկավ: Երեւանում հինգ կամ վեց տարվա գործունեությունից հետո իմացա, որ Գյումրիում կան մարդիկ, որ երազում են, որ այնտեղ որեւէ նախաձեռնությամբ հանդես գամ: Անարատ հղության հայ քույրերի միաբանության ընդհանուր մեծավորուհի մայր Արուսյակ Սաճոնյանը, որին քույր Արուսյակ եմ ասում, շատ էր ցանկանում, որ երգչախումբ ստեղծվի: Նա հարցրեց, թե հնարավոր է արդյոք դա անել, պատասխանեցի, որ հնարավոր է մի դեպքում, եթե կարողանամ անընդհատ գնալ Երեւան ու գալ, ասացի՝ եթե մեկ անգամ գամ, լսեմ երեխաներին, կառուցեմ երգչախումբն ու մեկնեմ, դժվար կլինի: Այդպես 2005 թվականին հիմնադրվեց «Տիրամայր Հայաստանի» երգչախումբը: Սկզբում երգչախմբի կազմում որբատան երեխաներն էին»,-պատմում է Ռոբերտ Մլքեյանը:

Հաջորդ տարի Գյումրիի «Տիրամայր Հայաստանի» երգչախումբը տոնելու է հիմնադրման 20-ամյակը:

Երգչախումբը հիմնադրելիս Ռոբերտ Մլքեյանը նպատակ է ունեցել ոչ միայն երգել սովորեցնել երեխաներին, այլեւ ստանալ նույնքան լավ երգչախումբ, որքան Հայաստանի պետական կամերային երգչախումբն է: Դա Մլքեյանին ու նրա աջակիցներին հաջողվել է, քանի որ կոլեկտիվը կայացել է: 2015 թվականին Հռոմի Սբ. Պետրոս տաճարում երգչախումբը մասնակցել է Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված, իսկ 2016 թվականին՝ Գյումրու Վարդանանց հրապարակում մատուցած պատարագներին: Հյուրախաղերով հանդես է եկել Ֆրանսիայի, Շվեյցարիայի, Իտալիայի, Բելգիայի, Լիբանանի տարբեր քաղաքներում:

««Տիրամայր Հայաստանի» երգչախումբը Հայաստանի պետական կամերային երգչախմբի հետ հանդես գալու երկարամյա փորձ ունի: Այն կատարում է օտար եւ հայ հեղինակների՝ Տիգրան Մանսուրյանի, Դավիթ Հալաջյանի եւ այլոց գործերը: «Նրանք կրթվում են նույնկերպ, ինչպես մեծերը, նույն մակարդակի աշխատանք է տարվում երկուսի հետ էլ, սակայն փոքրերի էներգետիկ դաշտն ավելի մեծ է, եւ նրանք իրենց երիտասարդական ավյունով, էներգիայով փորձում են հետ չմնալ բարձր ակադեմիական որակից»,-եզրափակում է Ռոբերտ Մլքեյանը:

ՅՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՄԱՐՔԱԿԱՆ

ՀԵՌԱՆՈՒՄ Է

Հայաստանի շախմատի հավաքականի երկարամյա անդամ Հրանտ Մելքումյանը հեռանում է հավաքականից:

Այս մասին ասաց Հրանտ Մելքումյանը: «Հայաստանի շախմատի հավաքականից հեռանալու որոշում եմ կայացրել, բայց հնարավոր է՝ տարիներ անց հետ վերադառնամ: Ինձ մի քանի տարով դադար է պետք: Որոշմանս հիմնական պատճառը ճանապարհներից հոգնելն է: Ավստրալիայից ճամփորդելը դժվար է»,-ընդգծեց նա:

Մելքումյանի խոսքով՝ Հայաստանի շախմատի հավաքականում այժմ սերնդափոխություն է, սակայն հավաքականում ընդգրկված երիտասարդները նոր շախմատիստներ չեն, նա մանկուց գիտի թիմի անդամներին՝ Հայկ Մարտիրոսյանին, Շանթ Սարգսյանին, Մանուէլ Պետրոսյանին:

«Նրանց հետ նույնիսկ մի քանի պարտիաներ եմ խաղացել, երբ դեռեւս 12 տարեկան էին: Հրաշալի ծանոթ եմ նրանց խաղին: Բոլորն ել կայացած շախմատիստներ են: Անշուշտ, Հայաստանի շախմատի տղամարդկանց հավաքականն ապահով ձեռքերում է»,-առանձնացրեց նա:

Վերհիշելով Հայաստանի հավաքականի «ոսկե» սերնդին՝ Լեւոն Արոնյանին, Գաբրիել Սարգսյանին, Վլադիմիր Հակոբյանին, Մելքումյանն ընդգծեց՝ Արոնյանն ու Սարգսյանն իրեն շատ են օգնել 2015 թվականին, երբ ինքը դարձավ Հայաստանի հավաքականի անդամ:

«Հրաշալի հիշում եմ, որ 2015 թվականին՝ առաջին անգամ հավաքականում ընդգրկվելուց հետո, պետք է առաջին պարտիան խաղայի: Այնքան հուզված էի, որ նախորդ գիշեր նույնիսկ չէի քնել: Այդ տարի աշխարհի առաջնությունում (հեղ. առաջնությունն անցկացվում էր Ծաղկաձորում) թիմը գրավեց 3-րդ տեղը: Նույն տարում Եվրոպայի թիմային առաջնությունում էլ երկրորդն էինք»,-վերհիշեց Մելքումյանը:

Վերջինս փաստեց, որ «մեծ շախմատ»-ից ամբողջապես չի հեռանում: Նա կշարունակի մասնակցել միջազգային մրցաշարերի Ավստրալիայում:

«Մինչեւ քովիդի համավարակը ես խիստ գրաֆիկով շախմատ էի խաղում եւ բնավ մտադիր չէի հեռանալ, սակայն համավարակից հետո առցանց շախմատն ինձ համար այդքան էլ անվտանգ չէր: Այդ իսկ պատճառով մոտ 2 տարի կտրվեցի շախմատից: Հետո փորձում էի վերադառնալ, սակայն ռիթմից դուրս էի մնացել»,-ասաց նա:

Հրանտ Մելքումյանը աշխարհի երիտասարդների (Մ18) առաջնության արծաթե մեդալակիր է, Հայաստանի շախմատի հավաքականի կազմում դարձել է աշխարհի թիմային առաջնության բրոնզե (2015), Եվրոպայի առաջնության արծաթե (2015) եւ Եվրոպայի առաջնության բրոնզե մեդալակիր (2023):

ՆՈՐ ԹԱՏԵՐԱՇՐՋԱՆ

«ՄԵՐ՝ ՄԻՆՉԵՎ ՀԻԾՈՂՈՒԹՅԱՆ ԿՈՐՈՒՍՏԸ»

Գավառի Լեւոն Քալանթարի անվան պետական դրամատիկական թատրոնը նոր թատերաշրջանը մեկնարկել է ռուս դրամատուրգ Վալենտին Կրասնոգորովի «Մեր՝ մինչեւ հիշողության կորուստը» պիեսի հիման վրա բեմադրված «Հիշի՛ր բժի՛շկ, հիշի՛ր» կատակերգությամբ:

Թատրոնի գլխավոր ռեժիսոր, ներկայացման բեմադրիչ եւ նկարչական ձեւավորող Նորայր Հերգնյանն ասում է՝ ստեղծագործությունն իրեն շատ է գրավել, քանի որ սիրո մասին է եւ միշտ արդիական: Հերգնյանի տեղեկություններով՝ այն չի բեմադրվել Հայաստանում, ուստի որոշել են լինել առաջինը: «Ուրախ, հետաքրքիր գործ է: Ժամանակակից քիչ պիեսներից է, որտեղ մարդկանց փոխհարաբերություններում ժարգոնային բառեր չեն կիրառվում, ինչի շնորհիվ ներկայացումը կարող են դիտել ոչ միայն հասուն, այլեւ ավելի փոքր տարիքի թատերասերները»,-նշում է նա:

Ռեժիսորը կարծում է՝ թատրոնում պետք է բեմադրվեն բազմաժանր ներկայացումներ՝ կատակերգություններ, դրամատիկ գործեր եւ այլն: «Չենք կարող առաջնորդվել մեկ տրամադրությամբ ու տեւական ժամանակ հասարակության այս կամ այն հոգեվիճակին համապատասխան ներկայացումներ մատուցել հանդիսատեսին: Մանուկների համար ներկայացումները եւս անհրաժեշտություն են: Պետք է հաշվի առնել, որ մարդիկ ձգտում են թատրոն գնալ, որպեսզի մի քանի ժամով կտրվեն այն իրականությունից, որում ապրում են, իսկ թատրոնը հրաշալի հնարավորություն է տալիս ներկայացնել տարբեր իրականություններ, ստեղծել յուրահատուկ մթնոլորտ ու տրամադրություն, ուստի մեր ներկայանակը հարուստ է, ընտրության հնարավորությունը՝ մեծ»,-հավաստիացնում է Նորայր Հերգնյանը:

Հ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

● *Մարտի 5-ին «Արամ Խաչատրյան» համերգասրահում տեղի կունենա ««Զարթոնք». Պարույր Սեւակ - 100» գրական-երաժշտական երեկոն: Տոմսերի արժեքը՝3000-10000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:*

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՄԱՐԻԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ

ՖԻՆԱՆՍՆԵՐ

ՀԱՐՑ. Ինչպե՞ս է ներկայացվում շահումով խաղերի կազմակերպման եւ անցկացման կանոնակարգը:

Արմենուհի Գրիգորյան (38 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Շահումով խաղի կազմակերպչի կողմից ներկայացված շահումով խաղի կազմակերպման եւ անցկացման կանոնակարգի կամ դրանում կատարվող փոփոխությունների, լրացումների համաձայնեցումն իրականացվում է «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի եւ խաղատների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն:

Շահումով խաղի կազմակերպիչը շահումով խաղի կազմակերպման եւ անցկացման կանոնակարգը կամ դրանում կատարվող փոփոխությունները, լրացումները համաձայնեցնում է լիազոր մարմնի հետ նախքան դրանց կիրառումը՝ ներկայացնելով լիազոր մարմին երկու օրինակից: Լիազոր մարմինը 15-օրյա ժամկետում ընդունում է որոշում՝ կանոնակարգին, առաջարկվող փոփոխություններին, լրացումներին համաձայնություն տալու կամ դրանք մերժելու մասին: Եթե լիազոր մարմինն ընդունել է կանոնակարգին կամ դրա փոփոխություններին, լրացումներին վերապահումով համաձայնություն տալու մասին որոշում, ապա կազմակերպիչը պարտավոր է այդ որոշումը ընդունելուց հետո՝ 10 օրվա ընթացքում, լիազոր մարմին ներկայացնել ուղղված փաստաթղթերը, որից հետո լիազոր մարմինը 5-օրյա ժամկետում հայտատուին տրամադրում է լիազոր մարմնի հետ համաձայնեցված շահումով խաղի կանոնակարգի կամ փոփոխությունների, լրացումների համաձայնեցված մեկ օրինակը: Եթե կազմակերպիչը վերը նշված որոշումն ընդունելուց հետո՝ 10 օրվա ընթացքում, ուղղված փաստաթղթերը լիազոր մարմին չի ներկայացնում, ապա լիազոր մարմնի որոշումը՝ կանոնակարգին կամ դրա փոփոխություններին, լրացումներին վերապահումով համաձայնություն տալու վերաբերյալ, համարվում է չեղյալ:

ՀՀ ֆինանսների նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 29.07.2004թ. թիվ 1164-Ն որոշման՝եթե շահումով խաղի կազմակերպչի կողմից շահումով խաղի կազմակերպման եւ անցկացման կանոնակարգում առաջարկվող փոփոխությունների կամ լրացումների արդյունքում փոփոխվելու են N 4 ձեւում նշված՝շահումով խաղերի մասին ներկայացված տվյալները, ապա կազմակերպիչը ներկայացնում է նաեւ շահագործման համար նախատեսված խաղային սարքավորումների ծագման սերտիֆիկատների պատճենները եւ շահումով խաղերի մասին տվյալները՝համաձայն N 4 ձեւի:

Շահումով խաղի կազմակերպիչը ներկայացնում է նաեւ շահագործման համար նախատեսված խաղային սարքավորումների ծագման սերտիֆիկատների պատճենները եւ շահումով խաղերի մասին տվյալները՝ համաձայն N 4 ձեւի, այն դեպքում, երբ փոփոխվում են շահումով խաղերի վերաբերյալ տվյալներ, որոնք չեն հակասում համաձայնեցված շահումով խաղերի կազմակերպման եւ անցկացման կանոնակարգին:

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Անշարժ գույքի նկատմամբ գրանցված իրավունքների վերաբերյալ վկայականը կորցնելուց հետո տրամադրվո՞ւմ է արդյոք դրա կրկնօրինակը:

Սարգիս Ստեփանյան (42 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. 2019 թվականի հուլիսի 1-ից հետո վկայականի կրկնօրինակ չի տրամադրվում, այլ վկայականը փոխարինվում է նոր գրանցման վկայականով՝ պետական գրանցման իրական ամսաթվի վերաբերյալ նշումով:

ՀՀ կադաստրի կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ընդ որում՝ մինչեւ 2019 թվականի հուլիսի 1-ը տրամադրված գրանցման վկայականը նոր գրանցման վկայականով փոխարինվում է դրա համար դիմումը «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով ներկայացվելու օրվանից 2-րդ աշխատանքային օրը, որի համար վճար չի գանձվում:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար Նարեկ Մկրտչյանը Խաղաղության նոբելյան մրցանակակիր Քայլաշ Սաթյարթիի կողմից Հնդկաստանում պարգեւատրվել է երախտիքի բարձր մեդալով:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ______
Ազգանուն՝ ______
Առաքման հասցե՝ ______
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ______

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	Շիրակ	-8 - 14 + 1 + 5
	Կոտայքի լեռներ	-8 - 12 + 1 + 4
	Կոտայքի նախալեռներ	-5 - 8 + 4 + 6
	Գեղարքունիք	-8 - 13 - 1 + 2
	Լոռի	-6 - 10 + 2 + 6
	Տավուշ	- 4 - 7 + 3 + 7
	Արագածոտնի լեռներ	-8 - 12 0 + 3
	Արագածոտնի նախալեռներ	- 5 - 7 + 3 + 7

	Արարատ	- 4 - 7 +9 + 12
	Արմավիր	- 4 - 8 +9 + 10
	Վայոց ձորի լեռներ	- 3 - 7 - 2 + 1
	Վայոց ձորի նախալեռներ	- 3 - 7 + 8 + 10
	Սյունիքի հովիտներ	- 4 - 7 +4 + 8
	Սյունիքի նախալեռներ	- 9 - 13 + 1 + 3
	ԼՂՀ	- 9 - 10 + 1 + 3
	Երեւան	1 - 3 + 5 + 7

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **27.2.2024**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*